№ 153 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 16 1902 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 16 № 153

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՖՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լայն հայեցակէտ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քահանայական խնդիրը Պետերբուրգում. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկահայերի դաւառական կրթական խնդրի առիթով. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԾԱՆՕՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ԼԱՅՆ ՀԱՅԵՑԱԿԷՏ

Ինչպէս պէտք է նայել թատրօնի վրա, արդեօք իբրև մի հիմնարկութեան վրա, որ ունի պետական-հասարակական նշանակութիւն, թէ իբրև թամաշայի և զուարճատեղի վրա:

Այդ հարցը դրված էր նորերս այն յանձնաժողովում, որ կազմվել է ներքին գործերի մինիստրութեան մէջ թատրօնական ներկայացումների օրէնսդրութիւն մշակելու համար: Առաջարկված էր, որ յանձնաժողովի անդամներից իւրաքանչիւրը յայտնէ իր առանձին կարծիքը: Բոլորը ընդգծեցին թատրօնի բարձր նշանակութիւնը և ցոյց տուին, որ կառավարութիւնը միայն ոստիկանի դեր չը պէտք է ունենայ թատրօնական ներկայացումների վերաբերութեամբ՝ հսկելով միայն կարգապահութեան վրա: Հարցը քննելուց յետոյ յանձնաժողովը միաձայն ընդունեց, որ թատրօնական ներկայացումները պէտք է տարբերել այն ներկայացումներից, որոնք ունեն միայն զուարճացնելու նպատակ և պէտք է տալ կարևոր պետական նշանակութիւն թատրօնին, որ անպայման իրաւունք ունի պահանջելու կառավարութեան կողմից յատուկ հոգատարութիւն:

Ցանձնաժողովը, բարձր նշանակութիւն տալով թատրօնի գաղափարին, դիտաւորութիւն ունի այդ տեսակէտը անցկացնել և այն օրէնսդրութեան մէջ, որ նա մշակում է: Ցանձնաժողովը, որ գործում է թատրօնական գրականութեան և բեմական գործերին տեղեակ անձանց մասնակցութեամբ, հրատարակել է իր առաջին նիստի արձանագրութիւնը, ինչպէս այդ մասին տեղեկացնում է այսօր հեռագրական գործակալութիւնը:

Շատ ուրախալի է, որ թատրօնին վերաբերեալ օրէնսդրութիւնը ծրագրվում է այնպիսի համակրելի հայեցակէտով և լայն հասարակական ըմբռնողութեամբ, ինչպէս մենք վերև յիշեցինք: Հասարակութեան ինտելիգէնտ դասը վաղուց նայում է թատրօնի վրա իբրև կրթական հասարակական ուժեղ մի հաստատութեան վրա, որից կարելի է և պէտք է օգտվել հասարակական երևոյթները լուսաբանելու և գաղափարական զուարճութիւններ պատճառելու համար:

Թատրօնական գործին նուիրված հիմնարկութիւնները, ընկերութիւնները կարող են իրանց քաջալերված զգալ և աշխատել թատրօնի գաղափարական նպատակների համար աւելի ևս մեծ եռանդով և համարձակութեամբ:

Ցանկալի է, որ յանձնաժողովի համակրելի տեսակէտը կարողանայ խոր թափանցել մշակվող օրէնքի յօդուածների մէջ և տայ մի լիակատար, լայն հայեցակէտով օրէնսդրութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

XXI

Ապրիլեան մի գեղեցիկ օր է. կատակօմբներն այցելելու եմ գնում Հռոմից դուրս: Երկնքի վրա լողում են լայնատարած թափանցիկ ամպեր: Արեւի շողերը փախչող ստուերների ետեւից յայտնվում են այս ու այն կարին, այս ու այն գմբէթի վրա, ապա սահում են ու անցնում գաղտագողի փութկոտութեամբ: Հարաւի արեւը զօրեղ է, նա կարծես ամպերի հետ խաղում է եւ նրանց միջից անգամ լոյս է տալիս:

Կառքն անցնում է նեղ, ստուերապատ փողոցներով, ուր վխտում է Հռոմի ամբոխը կեղտոտ ու անհոգ, մուրացիկ ու աղքատ: Ամենք անտարբեր կերպով նայում են դէպի ճանապարհորդ օտարականը, ուրիշները ուշադիր են նրան մի բան վաճառելու, նրանից մի բան ստանալու մտահոգութեամբ բռնված: Համարեա իւրաքանչիւր փողոցում մի հին, ուշագրաւ բան կայ. մի շաբաթ է առաւօտից երեկոյ թափառում եմ Հռոմում եւ դեռ որքան քիչ մասն եմ տեսել: Այս քաղաքն ամբողջ մի հսկայական միւզէ է հետաքրքիր անձի համար:

Ահա դարձեալ Կոլիզէն, որ երրորդ անգամն է տեսնում եմ, այնքան շատ բան է ասում նա հին մեռած աշխարհից, այնքան խոհեր յարուցանում իր ճնշող քարային զանգուածով: Նրա մի կողմում երեւում են մի աւեր շինութեան համարեա անձեւ բեկորներ—Ներօնի պալատն է. քիչ հեռու անցնում ենք Կոստանդինի յաղթական կամարի տակով, իսկ դէպի աջ՝ Ֆորում մի վերջում երեւում է Տիտոսի կամարը: Նոր քաղաքից բոլորովին դուրս ենք, այժմ մտնում ենք աւերակների աշխարհը, այն զարմանալի տեղերը, որոնց հետ կապված են հին աշխարհի ամենանշանակալից անցքերը: Մեր առջեւ բացվում է մի լայն ծառազարդ փողոց Via S. Georgio, որի մի կողմում, բլրի վրա երեւում են Ներօնի աքեղուկի մնացորդները չորս կամարներով: Ճանապարհը խուլ է եւ անմարդ: Երբեմն երբեմն պատահում են աղբակիր սայլեր, որոնց լծած են մի մի ջորի կամ էշ. քշում են մի կամ երկու հոգի, կեղտոտ ու ծոյլ մարդիկ, նայում են անցնող կառքին յօրանջելով եւ շրխկացնում են իրանց մտրակը օդի մէջ: Կան եւ այնպիսիները, որոնք թաղված իրանց սայլակի աղբի մէջ, քնել են հանգիստ, ջորին քաշում է դանդաղութեամբ, իսկ նրանց հետեւում է մի ուրիշը, նոյնպէս պառկած, որ նայում է սահող ամպերին եւ հանդարտ մռմռում է մի երգ: Անցնում է մի պառաւ կին, վոխտ, կռացած, հեռմարեա այլանդակ. նա անքաղաղ տանում է մէջքին դաշտերից հաւաքած ինչ որ բորբոսնած ցախի մի կոյտ. սրան հետեւում է մի ուրիշը, աւելի ջահիլ, բայց նոյնպէս խեղճ, նոյնպէս կեղտոտ եւ տանում է գլխի վրա մի անորոշ կոյտ, երեւի մի կապոց: Երկու փոքրիկ աղջիկներ վազէվազ հասնում են կառքին. նրանցից մէկը ձգում է մեզ մի փոքրիկ ծաղկէ փունջ եւ ձեռք է մեկնում. դա մուրացկանութեան մի փոքր տանելի, մշակված ձեւն է Իտալիայում: Պէտք է անպատճառ մի քանի սանտիմ ձգել, թէ չես ուզում, որ այդ փոքրիկ, փխրուն արարածը փոշու միջից, կառքի ետեւից մի կէս կիլոմետր վազէ: Նրանց հետեւում են երկու ուրիշ երեխաներ՝ նոյնպէս ծաղկէ փնջերով. նրանցից առաջինը աջողեցնում է ներս ձգել փունջը, երկրորդը փորձում է նոյնն անել. առաջինը դժգոհ է, մանուկներն իրար են փաթաթվում եւ ծեծվում, գոյութեան կատաղի կռիւ, որի մէջ վարժվում են արդէն այս փոքրիկները: Կառքն այդ ժամանակ առաջ է անցնում եւ հեռանում ենք տխուր տեսարանից:

Դէպի աջ ճանապարհից կիսախելագար եւ եղբայրասպան Կարակալլայի պալատն է՝ մասիվ ու մռայլ. աւերակները այլանդակօրէն ցցված են վեր բաղեղների եւ այլ խոտերի միջից: Աջ ու ձախ խաղողի այգիներ են. վերջապէս կարելի է լայն կրծքով օդ շնչել, այստեղ էլ չէ հասնում Հռոմի փողոցների դարշահոտութիւնը:

Ահա եւ Սցիպիոն Աֆրիկացու գերեզմանը: Համաշխարհային պատմութեան ամենամեծ անցքերից մէկն է կապված այդ անուան հետ: Իջնում եմ կառքից եւ ներս գնում: Մի խաւար այր է, մի կատարեալ կատակօմբ. մոմ եմ վառում, մարում է, երկրորդն եմ վառում եւ կամացուկ ցած իջնում. էլի նորանոր նրբանցքեր, էլի խոռոչներ, էլի փոս եւ այնտեղ խաւարի մէջ պառկած է հին աշխարհի ամենամեծ զօրավարի՝ Աննիբալի ոչ պակաս մեծ թշնամանը՝ Սցիպիոն: Ցամայի վճռական ճակատամարտը Քրիստոսից երկու դար առաջ (202 թ. Ք. ա.) այդ երկու մեծ անունները կապեց իրար եւ կարթագինացիների դամբարանը պատրաստեց: Զարմանալի ժամանակներ էին, հռոմէական զօրութեան առաջին վարարումն էր եւ հէնց առաջին ալիքները մի հզօր ու բարգաւաճ ազգ խեղդեցին: Կատոնի երկաթէ սերնդի ժամանակն էր (234—145 Ք. ա.), այն զարմանալի մարդու, որի համար Հռոմի մեծութեանը մի ամբողջ ժողովուրդ, մի ծաղկած պետութիւն զոհ բերելը քաղաքացիական առաքինութիւններից մեծագոյնն էր: «Բացի սրանից ես գտնում եմ, որ հարկաւոր է կործանել Կարթագէնը»—այսպէս էր վերջացնում այդ խստաբարոյ մարդը սենատում արտասանած իր իւրաքանչիւր ճառը եւ 146 թ. Ք. ա. նրա ցանկութիւնը կատարվեց, մի ուրիշ Սցիպիոն ջնջեց Կարթագէնը: Մի տեսակ պատմութիւն կայ, որ այդպիսի ոճիրները փառք է համարում, բայց այդպիսի փառքերից միշտ մնում է միայն մի մռայլ գերեզման մոռացված մի խաւարում:

Թողնում եմ Սցիպիոնին իր խոնաւ գերեզմանում եւ նրա այրի խաւարում՝ Կատոնի յիշողութիւնները եւ վերստին առաջ եմ գնում: Ահա եւ Via Appia-ն, այն մեծ զինուորական ճանապարհը, որ 312 թ. Ք. առաջ Ապպիուս Կլաւդիուս կոնսուլը շինել տուեց: Հին աշխարհի ամենամեծ ռազմական ճանապարհն էր այս, որ մի կողմից իջնում էր մինչեւ Իտալիայի հարաւային ծայրը եւ միւս կողմից թերակղզու երկարութեամբ գնում տարածվում էր մինչեւ հեռաւոր դաղթականութիւնները: Հռոմի զինուորական տիրապետութիւնների մէջ այս ճանապարհի դերը ահագին եղաւ: Այստեղից էին գնում լեգէօնները աշխարհներ տիրապետելու եւ նոյն ճանապարհով էին Հռոմ բերվում գերի ընկած շղթայակապ արքաներն ու զօրավարները: Դեռ տեղ տեղ մնում են այն սալերը, որոնցով փռված էր ամբողջ ճանապարհը եւ որոնց վրա այնքան անգամ կայծեր են արձակել լեգէօնների ձիերի սմբակները: Սա այն ճանապարհն է, որով եկան Ալպերից իջնող գերմանական բարբարոսները տաս դարերի արեան հաշիւը պահանջելու եւ Ռոմուլոսի հիմնած այդ գոռոզ պետութիւնը 476 թ. թաղեցին աւերակների տակ:

Ահա եւ մի փոքրիկ մատուռ, սպիտակ եւ կոկիկ. նա կրում է դրան ճակատին հետեւեալ մակագրութիւնը՝ «Quo vadis Domino». սա այն տեղն է, ուր, ըստ աւանդութեան, իբր թէ Փրկիչը պատահել է Պետրոս առաքեալին եւ նրան փախուստից յետ դարձրել Հռոմ խաչվելու:

Քիչ յետոյ կառքը կանգ է առնում մի ցանկապատ պարտէզի առաջ. այստեղ են կատակօմբները: Ներս ենք մտնում, մեր առջեւ բացվում են սիրուն ծառուղիներ, մշակված մարգեր, փոքրիկ տներ, ուր ապրում են սեւազգեստ կրօնաւորներ: Կատակօմբները գտնվում են այս խնամված պարտէզի տակ. այդ ստորերկրեայ այրերը պիտի իջնել առանձին անցքերով: Մի տնակում, ուր խմբված են նաեւ ուրիշ այցելուներ, գերմանացի եւ անգլիացի կանայք ու օրիորդներ, մեզանից մի մի ֆրանկ են վերցնում մուտքի վճար: Մի երիտասարդ կրօնաւոր բոլորիս բաժանում է մի մի մեղրամոմ, իսկ ինքը վերցնում է մի երկար մահակ, որի ծայրին կծիկի պէս փաթաթած է նոյն մոմից ստորերկրեայ խաւարը լուսաւորելու համար:

Ես երբէք չեմ կարող մոռանալ մեզ առաջ-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(Նամակ Պետերբուրգից)

—

Յուլիսի 6-ին

Պետերբուրգի հայ հոգեւորականների մասին «Մշակում» շատ է գրվել: «Մշակ»-ի ընթերցողներին արդէն յայտնի է, որ Պետերբուրգի հայ հոգեւորականների նման անգոյն հոգեւորականներ ոչ մի յետ ընկած գիւղում չէք գտնի: Գիւղական քահանան՝ ինչքան տգէտ լինի, այնուամենայնիւ նա կշիռ ունի իր ծուխի մէջ, նա որոշ օգուտ է բերում իր ծուխին: Երբ մի օտարաքաղաքացի հայ գալիս է Պետերբուրգ, ծանօթանում է մեր տէր-բարեների հետ, ուսերը վեր քաշելով ասում է. «Դրանք են ձեր քահանաները»: Վերջին ժամանակներումս, երբ սկսեցին հիւր գալ մեզ մօտ կրթված վարդապետներ եւ իրանց քարոզներով Պետերբուրգի անտարբեր հայ ժողովրդի աչքը բաց արին, մանաւանդ Մեսրոպ եւ Բագրատ վարդապետները, ժողովրդի մէջ շարժում սկսվեց, ժողովուրդը պահանջ զգաց լաւ քահանայ ունենալու եւ արդէն նախապատրաստութիւնների մէջ էր ծերացած աւագ քահանայի փոխարէն մի կրթված, իր կոչման արժանի, արքունական դպրոցներում հայ մանուկներին կրօնի դաս տալու շնորհ ունեցող քահանայ ունենալու:

Ժողովուրդը այս մտածմունքների մէջ էր, երբ լուր տարածվեց թէ՝ Սիմէօն սարկաւագ Մնացականեանն անհետացել է Պետերբուրգից: Եւ ահա քան օրից յետոյ գալիս է Պետերբուրգ սարկաւագը, իբրեւ նորընծայ քահանայ: Ժողովուրդը ապշաց մնաց, ժողովուրդը զայրացաւ: Առաջին անգամն էր, որ ականատես եղայ Պետերբուրգի հայերի մէջ միութեան, միութիւն՝ մի անիրաւացի գործի դէմ բողոքելու: Դա մի սրբազան բողոք էր, որտեղ անձնական հաշիւները մոռացած՝ հակառակ ծայրերը միացել էին, միացել էին ժողովրդի իրաւունքը պաշտպանելու համար: Եւ գիտէք, ընթերցող, այդ բողոքը ում դէմն էր, մի հայ թեմական առաջնորդի եւ հայ քահանայի դէմ:

Այդ ինքնակոչ քահանան, դեռ եւս քառասունքի մէջ եղած ժամանակ, հոգեւոր կառավարութեան միջոցով Պետերբուրգի բոլոր ծխականների սատրագրութեամբ մի գրութիւն ստացաւ հետեւեալ բովանդակութեամբ.

«Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցւոյ նախկին սարկաւագ Սէմէօն Մնացականեանին.

«Ըստ կանոնաց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ ծուխն է ընտրում իւր եկեղեցւոյ պաշտօնեայ քահանային: Այն ինչ՝ դուք, առ ոչինչ համարելով եկեղեցական կանոնադրութիւնը, յաջողեցրիք առանց ծխականների գիտութեան քահանայ ձեռնադրվել:

«Ի նկատի ունենալով այդ հանգամանքը՝ մենք ի ներքոյ ստորագրեալ Պետերբուրգի հայոց եկեղեցւոյ ծխականներս՝ այսու յայտարարում ենք ձեզ, որ մենք հրաժարվում ենք ձեզ մեր ծխի քահանայ ճանաչել, ուստի խնդրում ենք խզել ձեր ամեն յարաբերութիւնք մեզ հետ»:

Այժմ էլ մի գրութիւնով, մի եւ նոյն ծխականները դիմել են Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ:

Քանի որ մեր աւագ քահանան ծերացել է եւ մի նոր քահանայի կարիք է զգացվում Պետերբուրգի եկեղեցիների համար, խնդարհաբար խնդրում ենք, նախկին սարկաւագ Սիմէօն Մնացականեանին, այժմ քահանայ ձեռնադրված առանց մեր ցանկութեան եւ գիտութեան, հեռացնել մեր եկեղեցուց, կորելով դրա ռոճիկը: Այդպիսով միջոց տուեցէք հնարաւորութիւն ունենալ մեզ համար մի կրթված, իր կոչման արժանի քահանայ ընտրելու:

վում է մի լայն ծառազարդ փողոց Via S. Georgio, որի մի կողմում, բլրի վրա երեւում են Ներօնի աքեղուկի մնացորդները չորս կամարներով: Ճանապարհը խուլ է եւ անմարդ: Երբեմն երբեմն պատահում են աղբակիր սայլեր, որոնց լծած են մի մի ջորի կամ էշ. քշում են մի կամ երկու հոգի, կեղտոտ ու ծոյլ մարդիկ, նայում են անցնող կառքին յօրանջելով եւ շրխկացնում են իրանց մտրակը օդի մէջ: Կան եւ այնպիսիները, որոնք թաղված իրանց սայլակի աղբի մէջ, քնել են հանգիստ, ջորին քաշում է դանդաղութեամբ, իսկ նրանց հետեւում է մի ուրիշը, նոյնպէս պառկած, որ նայում է սահող ամպերին եւ հանդարտ մռմռում է մի երգ: Անցնում է մի պառաւ կին, վոխտ, կռացած, հեռմարեա այլանդակ. նա անքաղաղ տանում է մէջքին դաշտերից հաւաքած ինչ որ բորբոսնած ցախի մի կոյտ. սրան հետեւում է մի ուրիշը, աւելի ջահիլ, բայց նոյնպէս խեղճ, նոյնպէս կեղտոտ եւ տանում է գլխի վրա մի անորոշ կոյտ, երեւի մի կապոց: Երկու փոքրիկ աղջիկներ վազէվազ հասնում են կառքին. նրանցից մէկը ձգում է մեզ մի փոքրիկ ծաղկէ փունջ եւ ձեռք է մեկնում. դա մուրացկանութեան մի փոքր տանելի, մշակված ձեւն է Իտալիայում: Պէտք է անպատճառ մի քանի սանտիմ ձգել, թէ չես ուզում, որ այդ փոքրիկ, փխրուն արարածը փոշու միջից, կառքի ետեւից մի կէս կիլոմետր վազէ: Նրանց հետեւում են երկու ուրիշ երեխաներ՝ նոյնպէս ծաղկէ փնջերով. նրանցից առաջինը աջողեցնում է ներս ձգել փունջը, երկրորդը փորձում է նոյնն անել. առաջինը դժգոհ է, մանուկներն իրար են փաթաթվում եւ ծեծվում, գոյութեան կատաղի կռիւ, որի մէջ վարժվում են արդէն այս փոքրիկները: Կառքն այդ ժամանակ առաջ է անցնում եւ հեռանում ենք տխուր տեսարանից:

Դէպի աջ ճանապարհից կիսախելագար եւ եղբայրասպան Կարակալլայի պալատն է՝ մասիվ ու մռայլ. աւերակները այլանդակօրէն ցցված են վեր բաղեղների եւ այլ խոտերի միջից: Աջ ու ձախ խաղողի այգիներ են. վերջապէս կարելի է լայն կրծքով օդ շնչել, այստեղ էլ չէ հասնում Հռոմի փողոցների դարշահոտութիւնը:

Ահա եւ Սցիպիոն Աֆրիկացու գերեզմանը: Համաշխարհային պատմութեան ամենամեծ անցքերից մէկն է կապված այդ անուան հետ: Իջնում եմ կառքից եւ ներս գնում: Մի խաւար այր է, մի կատարեալ կատակօմբ. մոմ եմ վառում, մարում է, երկրորդն եմ վառում եւ կամացուկ ցած իջնում. էլի նորանոր նրբանցքեր, էլի խոռոչներ, էլի փոս եւ այնտեղ խաւարի մէջ պառկած է հին աշխարհի ամենամեծ զօրավարի՝ Աննիբալի ոչ պակաս մեծ թշնամանը՝ Սցիպիոն: Ցամայի վճռական ճակատամարտը Քրիստոսից երկու դար առաջ (202 թ. Ք. ա.) այդ երկու մեծ անունները կապեց իրար եւ կարթագինացիների դամբարանը պատրաստեց: Զարմանալի ժամանակներ էին, հռոմէական զօրութեան առաջին վարարումն էր եւ հէնց առաջին ալիքները մի հզօր ու բարգաւաճ ազգ խեղդեցին: Կատոնի երկաթէ սերնդի ժամանակն էր (234—145 Ք. ա.), այն զարմանալի մարդու, որի համար Հռոմի մեծութեանը մի ամբողջ ժողովուրդ, մի ծաղկած պետութիւն զոհ բերելը քաղաքացիական առաքինութիւններից մեծագոյնն էր: «Բացի սրանից ես գտնում եմ, որ հարկաւոր է կործանել Կարթագէնը»—այսպէս էր վերջացնում այդ խստաբարոյ մարդը սենատում արտասանած իր իւրաքանչիւր ճառը եւ 146 թ. Ք. ա. նրա ցանկութիւնը կատարվեց, մի ուրիշ Սցիպիոն ջնջեց Կարթագէնը: Մի տեսակ պատմութիւն կայ, որ այդպիսի ոճիրները փառք է համարում, բայց այդպիսի փառքերից միշտ մնում է միայն մի մռայլ գերեզման մոռացված մի խաւարում:

Թողնում եմ Սցիպիոնին իր խոնաւ գերեզմանում եւ նրա այրի խաւարում՝ Կատոնի յիշողութիւնները եւ վերստին առաջ եմ գնում: Ահա եւ Via Appia-ն, այն մեծ զինուորական ճանապարհը, որ 312 թ. Ք. առաջ Ապպիուս Կլաւդիուս կոնսուլը շինել տուեց: Հին աշխարհի ամենամեծ ռազմական ճանապարհն էր այս, որ մի կողմից իջնում էր մինչեւ Իտալիայի հարաւային ծայրը եւ միւս կողմից թերակղզու երկարութեամբ գնում տարածվում էր մինչեւ հեռաւոր դաղթականութիւնները: Հռոմի զինուորական տիրապետութիւնների մէջ այս ճանապարհի դերը ահագին եղաւ: Այստեղից էին գնում լեգէօնները աշխարհներ տիրապետելու եւ նոյն ճանապարհով էին Հռոմ բերվում գերի ընկած շղթայակապ արքաներն ու զօրավարները: Դեռ տեղ տեղ մնում են այն սալերը, որոնցով փռված էր ամբողջ ճանապարհը եւ որոնց վրա այնքան անգամ կայծեր են արձակել լեգէօնների ձիերի սմբակները: Սա այն ճանապարհն է, որով եկան Ալպերից իջնող գերմանական բարբարոսները տաս դարերի արեան հաշիւը պահանջելու եւ Ռոմուլոսի հիմնած այդ գոռոզ պետութիւնը 476 թ. թաղեցին աւերակների տակ:

Ահա եւ մի փոքրիկ մատուռ, սպիտակ եւ կոկիկ. նա կրում է դրան ճակատին հետեւեալ մակագրութիւնը՝ «Quo vadis Domino». սա այն տեղն է, ուր, ըստ աւանդութեան, իբր թէ Փրկիչը պատահել է Պետրոս առաքեալին եւ նրան փախուստից յետ դարձրել Հռոմ խաչվելու:

Քիչ յետոյ կառքը կանգ է առնում մի ցանկապատ պարտէզի առաջ. այստեղ են կատակօմբները: Ներս ենք մտնում, մեր առջեւ բացվում են սիրուն ծառուղիներ, մշակված մարգեր, փոքրիկ տներ, ուր ապրում են սեւազգեստ կրօնաւորներ: Կատակօմբները գտնվում են այս խնամված պարտէզի տակ. այդ ստորերկրեայ այրերը պիտի իջնել առանձին անցքերով: Մի տնակում, ուր խմբված են նաեւ ուրիշ այցելուներ, գերմանացի եւ անգլիացի կանայք ու օրիորդներ, մեզանից մի մի ֆրանկ են վերցնում մուտքի վճար: Մի երիտասարդ կրօնաւոր բոլորիս բաժանում է մի մի մեղրամոմ, իսկ ինքը վերցնում է մի երկար մահակ, որի ծայրին կծիկի պէս փաթաթած է նոյն մոմից ստորերկրեայ խաւարը լուսաւորելու համար:

Ես երբէք չեմ կարող մոռանալ մեզ առաջ-

Տեսնենք՝ եկեղեցական խորհրդի անդամները ինչպէս կը վերաբերվեն այս հարցին։

Աւելորդ չենք գտնում ասելու, որ Նորընծային ուղղած թղթին խորհրդի բոլոր անդամները ստորագրել են։

Մի ուշագրաւ բողոք էլ մեր առաջնորդին է ուղարկվում։ Թէպէտ շատ երկար է այդ բողոքը եւ գուցէ շատերի համար ձանձրալի լինի դրա ընթերցումը, այնուամենայնիւ դա շատ խրատական է եւ այդ տեսակ յանդիմանութիւնը հրապարակային պիտի լինի, ուստի առաջ եմ բերում ամբողջութեամբ։

«Նորին բարձր սրբազնութեան թեմական առաջնորդին հայոց Բեսարաբիոյ եւ Նոր-Նախիջեւանի Տէր-Ներսէս արքեպիսկոպոսին։

«Պետերբուրգում բնակվող հայոց ժողովրդից բողոք.

«Ձերդ բարձր սրբազնութիւնը հաճել է ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին, ահեղ պատարագին քահանայ ձեռնադրել մայրաքաղաքիս հայոց եկեղեցւոյ նախկին սարկաւագ Սիմէօն Մնացականեանին եւ ուղարկել այստեղ՝ «ի նախկին պաշտօնատեղի իւր» քահանայական պաշտօն մատուցանելու։ Անսպասելի եւ ծանր էր լսել այդ լուրը, եւս առաւել նրա հաստատութիւնն իմանալ։ Սրբազան հայր, մեզ՝ առօրեայ կեանքի բազմազբաղ հոգսերի ծանրութիւնը կրող, աշխարհայինը վերընտրող հոգեկանը մոռացութեան տալու տրամադիր անձանց համար ծանր է, խիստ ծանր է նոյնպիսի հոգեկան տրամադրութիւն, նոյնպիսի անտարբերութիւն տեսնել այն անձանց մէջ, որոնք ի պաշտօնէ եւ ի կոչմանէ կարգված են հաստատուն լինել հովիւքաջ ի վերայ բանաւոր հօտին Աստուծոյ, զգաստացնող եւ պահապան լքեալների, յուղղութիւն ածող մոլորեալներին։ Ս. Լուսաւորչի տօնին հաճել էք ձեռադրել մէկին եւ ապա մեզ յանձնել նորան ի հովութիւն. ս. Լուսաւորչի անունը մինթէ յուշ չածեց այն հաստատուն եւ անդրդվելի հիմքը, որի վրա ի սկզբանէ անտի անդրդվելի հաստատված է Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցին. մինթէ ազգային եկեղեցու մեծ Նահատակը եւ երկրորդ առաքեալը չը յիշեցրեց առաքելադիր եւ հայրապետահաստատ սրբազան այն կանոններն ու կարգերը, որ անփոփոխ դարուց պահպանում է հայոց եկեղեցւոյ բանաւոր հօտը։ Ձեռնադրութեան ահեղ խորհրդի ժամանակ, Աստուծոյ սեղանի առաջ բազմած եւ Մաշտոցը բռնած հարցեր էիք ուղղում խատուիկի բերանով ի լուր ժողովրդեան եւ պատասխաններ ստանում. ընտրեալ Նորընծան վկայել է ժողովրդից, ընտրեալն ունի առաքինի, բարի եւ հեզ վարք ու կենցաղավարութիւն, ընտրեալն ունի պատշաճաւոր ուսում եւ գիտութիւն թէ եկեղեցական պաշտաման եւ թէ վարդապետական ու սուրբ գրոց։ Արդ՝ ժողովուրդը, որին պէտք է հովուէ ձեր ձեռնադրեալը, ոչ միայն չէ ընտրել, այլ այդ գաղտնի յաջողեցրած ձեռնադրութիւնը լոկ ի լրոյ է տեղեկացել։ Մեզ յայտնի չեն այն շարժառիթները եւ թելադրութիւնները, որ դրդել են ձերդ բարձր սրբազնութեան չեղվել առաքելադիր եւ հայրապետահաստատ կանոններից. մենք ձգտեցինք նայել մեր ամենասուրբին եւ ամենաբարձր հոգեւոր հովիւների վրա իբրեւ մեր եկեղեցական կարգերի եւ կանոնների անխախտ պահպանողների, որոնց պատրաստ ենք հետեւել որդիական հնազանդութեամբ եւ անձնուիրութեամբ այդ չաւղով։ Մեր պատմական անցեալում, թէեւ բարեբաղդաբար սակաւ, բայց կան օրինակներ, որ ապացոյց են տալիս թէ որքան կորստաբեր է եղել ազգի ու եկեղեցու համար, երբ ժողովրդի եւ հոգեւոր հովիւների սերտ միաչնող կապը խախտվել, խզվել է։ Ամենքս սարսափով ենք յիշում Մելքիսեդեկ կաթողիկոսի վարմունքը, որ գաղտագողի, հակառակ ժողովրդեան կամքի ձեռնադրեց Նիկոլ Թորոսովիչին եպիսկոպոս։ Ուստի, սրբազան հայր, մենք՝ Պետերբուրգում ապրող հայերս՝ բողոքում ենք ձեր ձեռնադրութեան դէմ, համարելով այդ մեր եւ ընդհանուր ազգի եկեղեցական իրաւանց եւ կարգերի խախտումն եւ որդիական խոնարհութեամբ խընդրում ենք ի սէր եկեղեցու բարգաւաճման եւ պայծառութեան, ի սէր մեր եւ ձեր հոգեկան խաղաղութեան, չարիքը արմատից կտրեցէք եւ ապագայ չփոթութեան առաջն առէք։ Իսկ դրա ուղիղ եւ միակ ճանապարհն է, հեռացրէք այստեղից նոր ձեռնադրված անձուխ հովուին եւ կարգեցէք, ուր ծուխ կայ եւ պակասում է հովիւը»։

Տեսնենք առաջնորդը ինչպէս կը վերաբերվի այս արդարացի բողոքին։

Նորընծան երեսը պնդացրել է եւ այցելում է եկեղեցի։

Դիտող

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

—

Յուլիսի 13-ին

Վերջապէս Ալէքսանդրօպօլ քաղաքը, երկար ու ձիգ տարիներ սպասելուց յետոյ, շուտով կունենայ մի միջնակարգ դպրոց։ Այս տարվայ սեպտեմբեր ամսին բացվելու է այստեղ առեւտրական ուսումնարան։ Արդէն ուսումնարանի հոգաբարձութիւնը դպրոցի բնակարանի համար վարձել է Պետրոս-աղա Զիթողցեանցի տունը 1,600 ռուբլի տարեկան վարձով։ Ամեն ինչ կարգադրված է եւ առաջիկայ օգոստոսի 1-ից լինելու է աշակերտների ընդունելութիւնը։

Ի հարկէ, Ալէքսանդրօպօլի համար մեծ ուրախութիւն է, որովհետեւ մինչեւ այժմ չէր աջողվում ոչ մի միջնակարգ դպրոց ունենալը։ Բայց չատերը կարող են օգտվել այդ ուրախութիւնից եւ տալ իրանց որդոց այդ նոր բացվելիք առեւտրական դպրոցը, ահա մի հարց, որի վրա դարձնում ենք ուսումնարանի յարգելի հոգաբարձութեան ուշադրութիւնը։—Հոգաբարձութիւնը, հետեւելով Թիֆլիսի առեւտրական դպրոցի օրինակին, թոշակադրամ նշանակել է տարեկան 80 ռուբլի պատրաստական եւ 100 ռուբլի՝ հիմնական դասարանների համար։ Մինչեւ Ալէքսանդրօպօլը կարելի է հասնել տասնմեկ Թիֆլիսի հետ, ունի առաջինը վերջինի գործը, աջողութիւնը։ Ալէքսանդրօպօլը ներկայումս գտնվում է անտեսական կողմից շատ նեղ վիճակի մէջ, առեւտրական գործերը կանգնած են, արհեստաւորները գործ չունեն, ժողովրդի մեծամասնութիւնը թշուառ ու խեղճ դրութեան մէջ է։ Հարցնում ենք. մատչելի է արդեօք հոգաբարձութեան նշանակած այդ թոշակադրամի գինը Ալէքսանդրօպօլի ժողովրդի համար. չէ՞ որ թոշակի գնի չափ էլ հարկաւոր կը լինի հագուստի, կօշիկի, գրքի եւ այլ պարագաների համար։

Երեւակայեցէք, տեղիս ժողովրդական դպրոցներում տարեկան նշանակված 6 ռուբլի թոշակադրամը հազար ու մի նեղութիւն քաշելով՝ հազիւ կարողանում են հաւաքել։ Ուրեմն ատորին դասակարգին բոլորովին անհնար է առեւտրական դպրոց տալ իր զաւակներին։ Մնում է միջակ եւ ունեւոր դասակարգը։ Մինչեւ հիմա Ալէքսանդրօպօլից Թիֆլիսի զանազան դպրոցներում սովորող աշակերտներ կային մօտաւորապէս 40 հոգի, որոնք, ի հարկէ, ունեւոր ծնողների որդիք էին եւ այդպիսիների համար չատ ձեռնտու է այստեղ սովորելը։ Դրա վրա կարելի է աւելացնել տեղիս միջակ եւ ունեւոր դասակարգի տղաներ 60 հոգի եւ, մեր կարծիքով, քաղաքումս հազիւ լինեն բնիկ ալէքսանդրօպօլցի տղաներ 100-ից աւելի, որոնց ծնողները կարողանային նշանակած ներկայ թոշակադրամը վճարել։ Ուստի, քանի չուտ է, հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այս բանի վրա եւ նշանակել թոշակադրամ տարեկան չատ չատ 40 ռուբլի պատրաստականների եւ 50 ռուբլի հիմնականների համար, որով կարելի մատչելի դարձնել դպրոցը չատ ցանկացողների համար։ Եթէ առեւտրական դպրոցն ունի չ... ծախքեր, որոնք հազարների են հասնում, ... պակասը լրացնեն քաղաքային վարչութեան հաւաքված միջոցներից։

Վերջապէս ցանկանում ենք կատարեալ ... զութիւն այս անդրանիկ միջնակարգ դպրոցի մեր քաղաքում։

Է. Ն...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յուլիսի 14-ին

Թոյլ տուէք, խնդրեմ, ճշմարտութիւնը վերականգնելու համար տպագրել իմ հետեւեալ ... ռութիւնը «Մշակի» համարներից մէկում։

Անցեալ տարվայ «Մշակ»-ի № 210-ում Թիֆլիսի դոյեան եկեղեցու նախկին երէցփոխ պ. Ղամազեանցը գրում էր. «Թախանձագին խնդրում եմ թէ հոգեւոր իշխանութիւնից եւ Թանդոյեան եկեղեցու ծխականներից, գրվածները վերաբերվեն անկեղծ եւ եթէ ես բան եմ գրել փոփոխանցրել եկեղեցու գումարներից եւ կամ որ եւ է բանում կեղծել եմ, անշուշտ գրեն յանձնեն մարմնաւոր իշխանութեան՝ յանցանքիս պատժելու համար։ Ես ոչ ոքի ներողամտութեան կարօտութիւն չեմ զգում»։

«Մշակ»-ի էջերը եւ ընթերցող հասարակութեանը այլ եւս աւելորդ չը գրաղեցնելու համար, սպասեցի գործի վախճանին։ Անցեալ մարտի 6-ին, այսինքն մի տարի անցնելուց յետոյ, ինձ հազիւ աջողվեց ստանալ պ. Ս. Ղամազեանից, հայր գործակալի միջոցով, Թիֆլիսի դոյեան եկեղեցու 1900 թ. հաշուեմատեանը փաստաթղթերով, որ անմիջապէս հայր գործակալի № 147 գրութիւնով յանձնվեց մարտի 24-ին կայացած ծխական ժողովին եւ ... ժողովից ընտրված մասնաժողովին—Մարտի 26-ին ծխական երկրորդ ժողովը, լսելով մասնաժողովի զեկուցումը պ. Ս. Ղամազեանցի գործունէութեան մասին (միմիայն 1900 թ. միաձայն որոշեց խնդրել վիճակային առեանից որպէս զի նա մարմնաւոր իշխանութեան առաջին յանձնէ պ. Ս. Ղամազեանցին՝ եկեղեցուն պատճառած նիւթական զրկանքների եւ իր կատարած զեղծումների համար։ Որպէս զի միանգամայն վերջացրած լինեմ հարցի առիթով իմ բանակռիւը պ. Ս. Ղամազեանցի հետ, որ հաստատ գիտենալով իր կատարած զեղծումները եւ եկեղեցուն պատճառած նիւթական զրկանքները, դարձեալ գրում է «Մշակ»-ի 210 համարում վերեւ յիշած նորոշ տողերը, ներկայացնում եմ խմբագրութեանդ անհերքելի եւ օրինաւոր ապացոյցներ կատարված զեղծումների եւ եկեղեցուն պատճառած նիւթական զրկանքների համար։ Թանդոյեան եկեղեցու ծխական ժողովը կ... տարեց պ. Ս. Ղամազեանցի Թախանձագ...

նորդող այս կրօնաւորին. նա XX-դ դարի կաթոլիկ վարդապետի իսկական մի տիպ էր, հեռատքրքիր եւ վերին աստիճանի ընորոշ ժամանակակից ոգու հոգեւորականի դերի ըմբռնողութեան եւ առհասարակ կրօնական տակտիկայի տեսակէտից։ Հայր Սեբաստիանօ, այսպէս էր նրա անունը. եւ նա այնքան հետաքրքիր անձնաւորութիւն թւաց ինձ, որ նախ քան կատակօմբների նկարագիրը, ես մի քանի խօսք կասեմ նրա մասին։ Մինչեւ որ մեր մոմերը կը վառենք, ստորերկրեայ անցքի առաջ կանգնած նա անդադար խօսում է եւ ուրախ ուրախ հանաքներ է անում. խումբը, որ նա պիտի առաջնորդէ, ըստ երեւոյթին խիստ ախորժելի տրամադրութիւն է բերել։ Նա ասում է, որ օրիորդներին առաջնորդելու է այնտեղ, ուր ամենից աւելի հոտելի է ապրել։ Նա հաւատացնում է ծիծաղելով՝ որ այստեղ՝ այս սիրուն պարտիզի մելանխոլիկ միայնութեան մէջ եւ մանաւանդ կատակօմբների մէջ կեանքը շատ զուարճալի, շատ ախորժելի է եւ ինքն իրան երջանիկ է զգում։

—Ի՞նչ էք կարծում այդ մասին, օրիորդ, դառնում է նա մի գերմանուհու։ Օրիորդը հաւանում է նրա հետ եւ պեր Սեբաստիանօն այս անգամ իրօք երջանիկ է։ Բայց նա յիմար մարդ չէ, տեսնում է, որ բոլոր հասարակութիւնը կանանցից չէ կազմված, ուստի վարպետ դարձուածքով փոխում է խօսակցութեան նիւթը եւ նոյն ժպիտով, նոյն տօնով փորձում է ինձ հետ խօսել կրօնի եւ փիլիսոփայութեան մասին։ Ես խոյս չեմ տալիս, այդ էլ հետաքրքիր է։ Նա կրօնաւոր է, մի լաւ պատրաստված կրօնաւոր, կենսասէր եւ ուրախ, աւելի չուտ էպիկուրեան քան ստոիկ, եւ ես համոզված եմ, որ նա չէ հաւատում ոչնչի, բայց աշխատում է չը մատնել իրան։ Աստուածաբանութիւնը սովորել է հիմնաւորապէս՝ ունայնութեան յանգելու համար, թէեւ Ս. Օգոստինոս, Թովմաս Ակուինացի չրթունքների վրա են։ Խօսում է բացիօնալ փիլիսոփայութիւնից եւ անհաւատութիւնից. վերջինս գտնում է հրէշաւոր, ձեռքերը թափ է տալիս կեղծ տրագիզմով, գլուխը թօթվում է, բայց այս բոլորը մի այնպիսի եղանակով, որ ոչ մի կասկած չէ մնում, թէ ինքն էլ չէ հաւատում։ Ընդունակ է նոյն վայրկենին լուրջից կոմիկի, դրամատիզմից հեգնութեան եւ կրօնականից ցինիզմի անցնել։ Մոմերը վառելիս, նա նկատում է, որ կուզէինք առաջ երթալ, ուստի նա առաջինը ցած է իջնում աստիճաններով եւ մեզ առաջնորդում է ինչպէս մի զօրապետ իր զօրքին։ Նա ասում է, որ մեզ տանում է ցոյց տալու le bon Dieu-ն եւ այս խեղճ bon Dieu-ն այլ եւս նրա չրթունքներից ցած չէ ընկնում, պեր Սեբաստիանօն խաղում է նրա հետ, ինչպէս երեխան իր գնդակի հետ։

Բազմաթիւ քարէ աստիճաններով վար ենք իջնում. չորս կողմներս մութ է ու խոնաւ, մոմերը հազիւ լուսաւորում են եւ մեր ստուերները օրօրվում են պատերի վրա, ինչպէս այստեղ տանջված հին քրիստոնեաների ոգիները։ Այրերը բնական չեն թւում, կամ գուցէ յետոյ մեծացրած են, որովհետեւ խոնաւ քարերի վրա դեռ պարզ երեւում են մուրճերի եւ քլունգների հետքերը։ Փորել են ինչ ուղղութեամբ հնար է եղել եւ որքան խորը աջողվել է։ Բազմաթիւ են երկայն ու զալարուն միջանցքները, որոնք տեղ տեղ մի փոքր լայնանալով բացել են շրջանաձեւ հրապարակներ, ուր մի սրբի, մի նահատակի գերեզման է եւ մի փոքրիկ մատուռ։ Միջանցքների երկու կողմերում բարձր պատերի վրա փորված են երկար խոռոչներ դարեկների պէս մէկը միւսի վրա. ինչպէս երեւում է դիակները երկարութեամբ դրել են այդ փորվածքների մէջ եւ դրսից քարէ կափարիչով փակել եւ կրով այնպէս ծեփել, որ չը նկատվի, թէ այնտեղ գերեզման է։ Քարէ պատերի մէջ փորված այդ գերեզմանները բազմաթիւ են։

Ստորերկրեայ այս մռայլ, հեղձուցիչ մթնոլորտով աշխարհը՝ ուր այնքան տարիներ, նոյն իսկ դարեր մարդկային խիղճը սողացել է մի գաղափարի փարած, ուր նա իր կրաւորական պայքարով ըմբոստացել է բռնութեան դէմ, ուր այնքան ցաւած հոգիներ աղօթել են, լացել եւ մեռել, դեռ այսօր էլ ամենասուրբեր սրտերում յարուցանում է մի պատկառանքի զգացմունք։ Խղճի ազատութեան համար մղված իւրաքանչիւր պայքար նուիրական է եւ ամեն մի մարդ, որ զոհվում է այդ կուռում, մեծ է ու յարգելի։ Շատ աւելի լաւ կը լինէր առանց ընկերի, առանց վկայի, առանց մանաւանդ կրօնաւոր առաջնորդի թափառել այս մութ կամարների տակ, ապրել այդ տանջված հոգիների հետ եւ գաղափարական մարտի ամբողջ էքստազը ճաշակել միայնութեան խոհերով։ Բայց պեր Սեբաստիանօի հետ այդ անկարելի է. նրա կեղծ սգաւորի ձայնը, նրա անօգուտ ու սուտերով համեմած բացատրութիւններն ու պատմութիւնները, նրա bon Dieu-ն, գաղափարների պատմութեան մէջ ամենախոշոր անցքերի ամօթալի շահագործութիւնը, այս բոլորը, բոլորը փչացնում են այն տպաւորութիւնը, որ այս կատակօմբները կարող էին թողնել։

Առաջին սենեակը, ինչպէս հաւատացնում է առաջնորդը, առաջին պապերի գերեզմաններն է պարունակում. այստեղ նա փոխում է իր ձայնը, երկիւղած ու սգաւոր տօնով պատմում է նահատակների կեանքը եւ մահը, իսկ երբ հասնում ենք ս. Սեսիլի այրին, պեր Սեբաստիանօն հասնում է կրօնական տաք էքստազի, խօսք չէ գտնում մեզ պատմելու այդ ազնուական աղջկայ նահատակութիւնը II դարում, հրաչքների մի հէքիաթ։

Մի փոքրիկ քարէ տախտակի վրա երեւում է դեռ հին քրիստոնեաներին խորհրդանշան դարձած ձկան պատկերը։ Եկեղեցու հաւատքի այդ ժամանակներում, յայտնի է, որ ձուկը դարձաւ հաւատացեալների գաղտնի խօսակցութեան համար մի տեսակ երօգլիֆ, որովհետեւ յունարէն «ձուկ» բառը կազմված է հետեւեալ նախադասութեան բառերի սկզբնատառերից—«Յիսուս, Քրիստոս, որդի Աստուծոյ՝ Փրկիչ»։ Անծանօթ հաւատացեալներն իրար ճանաչելու եւ իրար բացվելու համար դիմում էին ձկան նկարի օգնութեան։ Պատերի վրա տեղ տեղ երեւում են նաեւ նկարներ ս. գրքից։ Դեռ մնում են մի քանի սարկոֆագներ մարմնակորներով լցված։ Կան փոքրիկ սեղաններ, որ մատուցվել է առաջին պատարագը։

Այցելութիւնը վերջանում է. մենք մոտենում ենք ելքի անցքին, դարձեալ քարէ մաշված նեղ աստիճանների մի անհագին շարք պիտի բարձրանայ։ Փիլիսոփայութեան եւ կրօնի մասին վէճը վերսկսվում է։ Վերից թափանցող լոյսը առիթ է տալիս նոր խորհրդածութիւնների եւ վէճերի. վարդապետը պնդում է, որ կրօնը լոյս է. մէկը նրան պատասխանում է, որ լոյսը բանականութիւնն է եւ թէ կրօնը խաւարի բնակիչ է։

—Բայց հաւատն ու բանականութիւնը կարելի է հաշտեցնել, բացականչում է պեր Սեբաստիանօն արդէն վերջին աստիճանի վրա։

—Նրանք չեն հաշտվի երբէք, պատասխանում է իր հակառակորդի վճռական ձայնը։ Մենք դուրս ենք գալիս լոյս աշխարհ, բանտարկվածների պէս լայն կրծքով, ազատորդ ծծում ենք օդը. արեւի շողերն այժմ այնքան գուրեկան են, բնութիւնն ամբողջ այնքան գեղեցիկ։

Կատակօմբների պարտիզից դուրս ենք գնում։ Կառքը տանում է մեզ աւելի հեռու, դեպի լայնարձակ դաշտերը։ Հեռուից լսվում են մի խումբ աշխատող աղջիկների հնչուն, մեղմ ձայները. նրանք երգում են այնքան գեղեցիկ, այնքան քաղցր, եղանակը յիշեցնում է մեր երկրի «էլէլէն», աւելի հեռու, դաշտերի կանաչաւուն հարթութեան վրա փռված աւերակների շարքեր եւ այլ շէնքերի մնացորդներ։ Մարդ նայում է այդ աշխարհի թողած այդ տխուր մնացորդներին, այդ բաղեղապատ քարերին, այդ կիսափլուզ կամարներին եւ մտածում է—մինթէ ճշմարիտ ազատ խարհում ոչինչ չը կայ կայուն, ոչինչ չը կայ յարատեւ։

Ա. Ահարոնեան

խնդիրը, լիայոյս լինելով, որ հոգեւոր իշխանութիւնը եւս չի թողնի առանց հետեւանքի եւ կը յանձնէ գործը դատարանին։

Երէցփոխ Թանդոյեան եկեղեցու՝

Խ. Տէր-Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սենատը քննելով մի մանաւոր գործ, որ վերաբերվում էր մի մարդու, որը մի աղջկայ խաբել եւ կուսութիւնը խախտել էր, խոստացել պսակվել նրա հետ, բայց այդ խոստումը չէր կատարել, բացատրեց, որ յանցանքի էութեան համար անհրաժեշտ է, որ խոստումը հանդիսաւոր եղած լինի, այսինքն, որ խոստումը ոչ թէ վայրիվերոյ լինի, այլ կատարվի յայտնի տրուաքին ծէսերով, որոնք կարող կը լինէին խոստումի ապացոյցը լինել, օրինակ նշանադրութիւնը, խոստում տալ ուրիշ անձերի ներկայութեամբ եւ այլն։

—

Պետերբուրգից «Тифл. Листокъ» լրագրին հաղորդում են, որ 1902 թւի մայիսի 21-ին տեղի ունեցաւ մի շատ նշանաւոր բացատրութիւն մի հարցի առիթով, որ յարուցել էր անդրկովկասեան քաղաքային վարչութիւններից մէկը։ Օղուրգէթ քաղաքի լիազօրների ժողովը 1900 թւին որոշեց ոռճիկ տալ քաղաքային ապագին, նախկին քառամեակի նման, 1200 ռուբլեան։ Քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական ատեանը պակասեցրեց այդ ոռճիկը 400 ռուբլով։ Այդ որոշման դէմ գանգատ ներկայացրին կառավարչական սենատին մի քանի լիազօրներ։ Սենատը անկանոն գտաւ նահանգական ատեանի որոշումը, բացատրելով, որ նահանգական ատեանը ապօրէն է վարվել, եւ որոշեց վերացնել Քութայիսի նահանգական ատեանի այդ որոշումը։

—

Նահանգապետը թողատրեց Ժընէվի համալսարանի քիմիայի դոկտոր եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների քաղաքացի Գրեգին Բաստուրմաճեանին բանալ Թիֆլիսում քիմիական լաբորատորիա՝ վերլուծելու համար ամեն տեսակ հանքային ջրեր, զանազան օրգանական իրեր, նոյնպէս եւ հանքեր։

—

Բանտային գլխաւոր վարչութեան մէջ,—ասում է «Русск. Вѣд.» լրագիրը, տեղեկութիւններ կան, որ մեծ թշուառութեան մէջ են այն ընտանիքները, որոնք կամաւոր կերպով հետեւել են իրանց ամուսիններին Սիբիր։ Ապրուստի միջոցներ հայթհայթել Սիբիրում շատ դժուար է՝ գործի պակասութեան պատճառով։ Մի քանի նահանգապետների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, այդ տեսակ ընտանիքները սովամահ են լինում, բացի ուրիշ զրկանքներ կրելուց։ Ի նկատի ունենալով այդ, բանտային գլխաւոր վարչութիւնը դիմեց նահանգապետներին՝ խնդրելով, որ ոստիկանութեան պաշտօնեաները առանձնապէս բացատրեն դատապարտվածների կանանց այն զրկանքները, որոնց կենթարկվեն իրանք եւ իրանց երեխաները Սիբիրում եւ համոզել Սիբիր գնալ ցանկացող անձանց գոնէ յետաձգել իրանց ճանապարհորդութիւնը, մինչեւ որ իրանց ամուսինները իրաւունք կը ստանան ապրել բանտից դուրս։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Նկարիչ Վարդգէս Սուրէնեանի «Թափօր ս. Էջմիածնում» մեծադիր պատկերը նորերս Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը գնեց 600 ռուբլով եւ, ինչպէս լսում ենք, մտադիր է ուղարկել Էջմիածնի թանգարանին նուէր»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ Կարապետ վարդապետը մեզ խնդրում է տպել հետեւեալը. «Առաջիկայ ուսումնարանական տարվայ համար ճեմարանը ոչ մի գիշերօթիկ աշակերտ չէ կարող ընդունել, ունենալով աւելի քան բաւարար թիւ գիշերօթիկ սաների»։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 8-ին, երեկոյեան 6—7 ժամին, մեծ հեղեղ եկաւ Քաղաքիկում, Տանակերտում եւ Վերին-Ագուլիսում։ Մանրամասնութիւնները միւս անգամ։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Երկրաշարժների մի խումբ է եկել Ղուբա, չրջում է գաւառը եւ գիւղացիների հողաբաժինները չափելուց յետոյ, քաշում է նրանց «պլանները», Որոշելով գիւղացու հողաբաժինը՝ այդ խումբը տնկում է նրա վրա ձողեր (межевые знаки) սահմանված տեղում, ապա յանձնում է գիւղացիներին, որոնք, առանց որ եւ է վէճի, կարողանում են հիմա ազատ իրանց հողով օգտվել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ

Մենք շատ սիրում ենք ծրագիրներ կազմել, յատակագծեր որոշել եւ յետոյ երբէք չիրագործել այդ ծրագիրները։ Ուրիշ խօսքով, մենք զբաղված ենք ինքնախաբէութեամբ։ Ոգեւորվել, բորբոքվել, կրակ կորել հասարակական մի որ եւ է այրվող հարցով եւ չը գործել գործնականապէս, նշանակում է զուրկ լինել ձեռներէց ոգուց, այդ նշանակում է ապրել բոպէի ազդեցութեան տակ։

Ատրպատականի մեր գաւառաբնակ հայ ժողովրդի կրթական գործի ներկայ խիստ անմխիթար կացութիւնը ու նրա մէջ տիրող խորին խաւարն ու տգիտութիւնը վրդովեցնում, խռովեցնում են մեզանից իւրաքանչիւրին, որ քիչ ու շատ, այսպէս ասած, գրել-կարդալ գիտէ եւ հետաքրքրվում է հասարակական այս կամ այն գործով. մենք այդ տիրող խաւարի եւ տգիտութեան մէջ նկատում ենք մեր գաւառական-գիւղական ժողովրդի վերջնական անկումն ու կործանումը եւ օր առաջ շտապում ենք միջոցներ ձեռք առնել՝ ժողովուրդը կորստի անդունդից ազատելու համար։

Տարիների ընթացքում պարսկահայերիս մէջ դպրոցական-կրթական խնդիրը ամենայայրող ու առաջնակարգ հարցն է եղել, որը իր խիստ կարեւորութեամբ ու աչքի ընկնող, գերաղանց նշանակութեամբ դէպի ինքն է գրաւել փոքր ի շատէ կրթական գործով հետաքրքրվող շրջաններից կամ անհատներից սկսած մինչեւ ամենալուրջ ու գրական մտածողների ուշադրութիւնը։ Եթէ թերթելու լինենք հայ լրագրութեան վերջին տարիների էջերը, կը գտնենք, որ Պարսկաստանից ուղարկված թղթակցութիւնների առաւելագոյն մասը կազմում են այն նամակները կամ յօդուածները, որոնք, այսպէս թէ այնպէս, նուիրված են եղել պարսկահայերի կրթական գործին։ Այդ խնդրի առիթով կարդացվել են նոյն իսկ Թաւրիզում հրապարակական դասախօսութիւններ, տեղի են ունեցել ամենաթունդ վիճաբանութիւններ եւ մինչեւ անգամ միմիայն գաւառները կրթութիւն տարածելու նպատակով կազմվել են լուրջ հիմքերի վրա դրված յատուկ ընկերութիւններ եւ այլն։ Սակայն չը նայած այդ բոլորին, չը նայած որ այդ «խեղճ ու կրակ» խնդիրը տարիներ շարունակ այդպէս անխնայ ծեծվել ու զզզվել է,—էլի մենք դրական, գործնական մի հետեւանքի չենք կարողացել հասնել։ Մինչեւ այսօր դեռ մեր զարթաղցի հայը մնացել է նոյն վայրենի, անտաշ ու կոպիտ լեռնացին, հարիւրաւորներով ուշիմ, ճարպիկ ու սրամիտ գիւղական երեխաներ, դպրոցներ չը լինելու պատճառով, դատապարտված են եղել դատարկ ու պարապ-սարապ փողոցներում թափառելու, մինչեւ այսօր դեռ Սուլդուզի, Սօուչբուլաղի, Միանդուապի եւ Բարանդուզի նման հայաբնակ մեծ շրջանների բազմաթիւ հայերը մնացել են նոյն քրդախօս ու թրքախօս, քրդից ու թուրքից ոչնչով չը զանազանվող, անթափանց խաւարի մէջ խարխափող թշուառականները։ Գոյութիւն ունեցող գաւառական-գիւղական երկու զոյգ մի կէնտ դպրոցներն էլ, անկազմ ու անկերպարան, զուրկ են հմուտ եւ սրտացաւ ուսուցիչներից։

Հարց է այժմ. մինչեւ երբ պէտք է թէօրիաներով զբաղվենք, երբ արդեօք մեր ձայնն ու ուռաջարկութիւնը արձագանք կը ստանայ, երբ խօսքից կանցնենք գործին, երբ վերջապէս գործադրութիւն կը գտնեն մեր տարիներից ի վեր կազմած ծրագիրներն ու պլանները։

Հրաւիրում ենք այդ հարցերի վրա Ատրպատականի թեմի առաջնորդի եւ «Թաւրիզի հայուհեաց բարեգործական միացեալ ընկերութեան» ուշադրութիւնը։

Միրզա Մէլիք-Սայեադեանց

Թաւրիզ.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

Բոստոն, յուլիսի 7-ին

Անցեալ կիրակի ներկայ էի Փրովիդէնս քաղաքի մէկ հանդիսին։ Ռօտ Այլընտ նահանգի մայրաքաղաքին հայերը այնքան նախանձոտ են միւս հայաբնակ քաղաքները գերազանցելու, որ առաջուց յայտնի էր թէ ամեն ջանք ի գործ դրված պէտք է լինի իր տեսակին մէջ եզակի հանդէս մը պատրաստելու։ արդիւնքը ամեն ակնկալութիւն արդարացուց։

Փրովիդէնս քաղաքը ունի Ամերիկայի հայ գրագէտներու ամենէն ճոխերէն մէկը. նոյն քաղաքը ունի զինուորական նուագածուցագ խումբ մը, ինչպէս նաեւ մայրաքաղաքի ընկերութիւն մը, միւս հասարակ կազմակերպութիւններէն զատ։

Հանդէսը ցոյց տուաւ, թէ այդ աշխատութիւնները զուր չեն անցեր. հայ նուագածուցագ խումբը նուագեց ազգային եւ ամերիկեան երգանախներ, երգիչ խմբակ մը՝ կազմված տիկիններէ եւ երիտասարդներէ, տիկին ճառախօսներ գաղութին գեղեցիկ սեռին մասնակցութիւնը յայտնեցին հանրային գործին եւ երբ կարգը եկաւ հանդանակութեան՝ կիներն ու երեխաները օրինակ տուին այրերուն։ Եթէ դրամը կարելի է իրրեւ չափ ընդունել հայրենասիրական զգացումներու, մանաւանդ երբ նուիրողը իր կեանքի գնով վաստակածէն է, որ կուտայ, այն ատեն այդ չափը պէտք է շատ պատուաւոր ըլլայ Փրովիդէնսի հայոց։ Մէկ քաղաքի մը հայերը մէկ ժամ միջոցի մէջ հանգանակեցին 5,700 տօլար։ Տարի մը առաջ առասպելական պիտի թուէր այդ գումարը ամբողջ ամերիկեան հայ գաղութին համար, հիմա մէկ քաղաք մը այդքան կրնայ նուիրել, տեսէք ինչ հրաչքներ կը գործէ միութիւնը։

Հանդէսին մէկ նկատելի առաւելութիւնը կը կայանար ատենախօսներու ընտրութեան մէջ։ Նահանգին կառավարիչը թէեւ խոստացեր էր անձամբ ներկայ գտնուիլ, սակայն իր պաշտօնեաներէն մէկը ղրկեր էր։ Ամերիկացի ուրիշ ատենախօս մ'ալ կար, ան ալ կառավարական մարդ։ Երկուքն ալ համակրանքով խօսեցան, բաղդատեցին հայերու կացութիւնը իրենց նախահայրերու վիճակին հետ 1776-էն առաջ, ըսին թէ իրենք ալ լուծէ մը ազատելով երջանիկ ու յաջող երկիր մը հիմներ են, ուր աշխարհի ծայրերէն փախստականներ կուգան ապաստան գտնելու եւ մաղթեցին, որ շուտով հնչէ ժամը, երբ մեր տարաբաղդ երկիրն ալ վայելէ արդարութեան եւ քաղաքակրթութեան բարիքները։

Ամերիկայի ատենախօսներէն մէկը շատ կարեւոր խնդրի մը շուրջ դարձաւ, յայտնեց թէ իրենց եւ Ամերիկայի ամեն հայրենասիրի մտածումն է հայ գաղթողները ամերիկացի ազնիւ քաղաքացիներ դարձնել, մարդիկ պատրաստել, որ իրենց քուէով ու աշխատութեամբ օժանդակեն մեծ հասարակապետութեան յառաջացման. սակայն, նկատեց ամերիկացին, մենք քաղաքացիին մէջ չենք ուզեր սպաննել հայրենասէրը. այն օրէն, որ դուք կը մոռնաք ձեր ընկիկ երկիրը, Սայնտեղի թշուառութիւնը, ձեր անձնասիրական ձգտումներով միայն կապրիք, այն ատեն դուք արդէն արժանիքը կը կորսնցունէք հասարակապետութեան ազատ քաղաքացի դառնալու։ Ուրախ եմ, կրկնեց ատենախօսը, որ ձեր երկրի վիճակով կը հետաքրքրիք, անոր բարեփոխումին համար կաշխատիք. կը յուսամ թէ օր մը յաջողիք ձեր նպատակին հասնելու եւ վստահ եղէք, թէ ինչ որ կրնանք ընել միջազգային օրէնքաց ներած սահմանով, պիտի ընենք ձեր եղբայրներուն եւ քոյրերուն համար։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անցեալ շաբաթ, հինգշաբթի, Բրիւսէլում, «Café de la Tourelle» դահլիճում կայացաւ միջազգային հայասիրական կոնգրէսը։ Այդ կոնգրէսին մասնակցողների մէջ մանաւանդ դարձնում էին իրանց վրա ուշադրութիւն Ժան Ժորէս, Էդմոն դէ-Պրէսանսէ, Վեզէլ, տիկին Սեվէրին, Գէնենինգս, բարձունէի Վաստեվիդ, դանիական ֆինանսների նախկին մինիստրը Ժան Լունդ, Բէրնար Լազար, Էլիզէ Ռէկլիւ, Վանդէրվէլդ, Ֆիւրնէմոն, Հէկտոր Դէնի, Բէրտրան եւ ուրիշներ։ Նախագահում էր Գուզօ-դէ-Լէգէ։ Կոնգրէսը բացվեց նախագահի հետեւեալ ճառով. «Մեր կոնգրէսը,—յայտնեց Գուզօ-դէ-Լէգէ,—միջազգային արդարութեան գործ է։ Մենք բոլորս ձգտում ենք այն բանի, որպէս զի կուլտուրական ազգերը օրէնքի պահապանները լինեն, օգուտ քաղելով իրանց ոյժից ոչ միայն նեղ-ազգայնական նպատակների համար, այլ եւ նրա համար, որ ստիպեն իրանց պարտաւորութիւնները հպատակների առաջ մոռացող կառավարութիւններին։ յարգել քաղաքակրթութեան աւանդութիւնները»։ Նախագահից յետոյ խօսեց Պիէր Կիար. «Ասօրական մի թագաւոր,—սկսեց հռետորը,—նկարագրեց իր ճանապարհորդութիւնը այն նահանգների մէջ, որոնք վերջը Հայաստան դարձան։ Այդ հին միապետը կտրորում էր իր ճանապարհի վրա կանանց եւ երեխաներին, այրում էր գիւղեր, բռնում էր եւ տանջանքների էր ենթարկում տղամարդկանց։ Համեմատելով այդ գազանի գործերը այն բանի հետ, ինչ որ այժմ կատարվում է Հայաստանում, մենք տեսնում ենք, որ զանազանութիւնը մեծ չէ։ Պէտք է յիշել դիպլոմատիական այն գործողութիւնները, որոնց նպատակն էր բարւոքել հայերի վիճակը, սկսած 1856 թւից. այն ժամանակ կարելի էր յուսալ, որ մի շարք ռէֆօրմներ վերջ կը դնեն թիւրքաց հայերի իրաւազուրկ դրութեանը։ Այն ժամանակից կէս դար անցաւ։ Դիպլոմատիան յաճախ բարձրացնում էր իր ձայնը ի նպաստ հայերի։ Եւ ինչ։ Երկու տարվայ ընթացքում (1894-ից 1896) 300,000 հայեր սպանվեցին, տանջվեցին եւ այլանդակվեցին։ 1896 թւից գազանութիւնները դադարեցին, բայց հիմք կայ ենթադրելու, որ նորից սպանութիւնների եւ հրդեհների շրջանը կը սկսվի Հայաստանում։ Հարկաւոր է ճիշտ միջոցներ գտնել այդ դրութեան դէմ եւ ստիպել պետութիւններին միջամտելու հայկական գործերում։ Ասում են,—բացականչեց կիսր,—որ հայերը վայրենութեամբ են պարապվում։ Այդ սուտ է։ Հայ ազգաբնակութեան 90 տոկոսը գիւղացիներն են կազմում։ Անբարեխիղճ են այն մարդիկ, որոնք այդպիսի փաստերով են հանդէս գալիս հայերի դէմ։ Այդ հարցը ոչինչ առարկութիւններ չը պէտք է յարուցանէ։ Մէկ ուրիշ առարկութիւնն եւս այն է, որ մեր հակառակորդները հիմնվում են սուտատիկայի վրա։ Նրանք ասում են, որ հայերը ընդամենը 3 միլիոն են թւով եւ ցրված են 12 միլիոն թիւրքերի միջեւ։ Մի եւ նոյն ժամանակ, սակայն, մոռանում են, որ այդ ազգաբնակութիւնը խմբված է որոշեալ շրջաններում եւ միայն շրջապատված է թիւրք հարեւանների ծովով։ Նոյն իրաւունքով գերմանացիները կարող էին միացնել իրանց երկրի հետ Շամպանը եւ ասա ասել, որ Շամպանում ազգաբնակութիւնը ֆրանսիական չէ. բայց եթէ դէն գցել այդ բոլոր առարկութիւնները, այնու ամենայնիւ դրական միջոցներին վերաբերեալ հարցը դեռ անլուծելի է մնում։ Պէտք է արդեօք, պահպանել status quo, այսինքն անտարբեր նայել հայերի կոտորածների վրա։ Պէտք է արդեօք աշխատել Հայաստանը Ռուսաստանի հետ միացնելու համար։ Պէտք է աշխատել ձեռք բերելու վարչական բէֆորմներ։ Ես հակվում եմ դէպի վերջին լուծումը։ Նա, իմ կարծիքով, ամենաարդարացին եւ գործնական է։ Առաջին նիստն աւարտվեց տիկին Սեվերինի ճառով մամուլի ընթացքի մասին հայկական հարցում։ Երկրորդ նիստը սկսվեց ֆրանսիական ազնուադարձ պատգամաւոր Ժորէսի հետեւեալ ճառով. «Մենք բոլորս յանցաւոր ենք հայերի առաջ։ Ամօթ է կառավարութիւնների անգործութիւնը պատրուակ բերել, որովհետեւ կառավարութիւնները մեր մարմնից են եւ մեր ոգուց։ Եթէ եւրոպական ազգերը անկեղծ ոգեւորվէին հայերին օգնելու գաղափարով, կառավարութիւնները չէին յապաղի նրանց հետեւելը։ Ուրբաթ երեկոյեան փակվեց կոնգրէսը։

—«Петерб. Вѣд.» լրագրին հաղորդում են որ Կ. Պոլսում մեծ իրարանցում է գցել Բրիւսէլում հայասիրական կոնգրէսի բացման լուրը։ Կոնգրէսի բացումից մի քանի օր առաջ սուլթանը հրաւիրեց պալատ հայոց պատրիարքին եւ պահանջեց, որ նա իր կողմից միջոցներ ձեռք առնէ, որպէս զի կոնգրէսը չը կայանայ։ Պատրիարքը զարմանք յայտնեց մի այդպիսի խնդիրքի առիթով եւ ասեց, որ կոնգրէսը կազմում են ոչ թէ Թիւրքիայում ապրող հայերը, այլ հայերի բարեկամները արտասահմանում, որոնց համար իր միջամտութիւնը ոչինչ նշանակութիւն չէ կարող ունենալ։ Երբ սուլթանն սկսեց պնդել, պատրիարքը յայտնեց, որ հրաժարական կը տայ։ Սուլթանը տեսնելով, որ իր ցանկութիւնը չէ կարող իրագործվել պատրիարքի միջոցով. վճռեց դիմել բէյգիական կառավարութեանը։ Բայց այդտեղ էլ նա անյաջողութիւն ունեցաւ, որովհետեւ Լէոպոլդ թագաւորը բարկացած է նրա վրա Բրիւսէլից Թիւրքաց դեսպան Կարաթէօդորի-փաշային յետ կանչելու համար, որ վայելում էր Բելգիայի թագաւորի թէ յարգանքը եւ թէ համակրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 13-ին Ստրէլնա ժամանեց յունական Օլգա Կոնստանտինովնա թագուհին արքայորդի Խրիստոֆորի հետ։—Յուլիսի 13-ին «Կոնտան» հիւրանոցում աւստրօ-ունգարական գաղթականութիւնը ճաշով պատուեց աւստրիական դիւանագիտական «Սիգէպվար» կրէյսերի հրամանատարին եւ օֆիցէրներին։ Ի պատիւ այստեղ եկած նախկին մինիստր-նախագահ Մուտցուկատայի յուլիսի 13-ին եւրոպական դեսպանատան մէջ կայացաւ ճաշ։

ՊԵՏՐՕԶԱՎՕԴՍԿ։ Արխանգէլսկից անցնելիս ժամանեց զինուորական մինիստրը. նա այցելեց թնդանօթի գործատունը, զօրանոցները եւ ուղեւորվեց Պետերբուրգ։

ՊԱՐԻԶ։ Համայնքից քոյր-դաստիարակչուհիներին դուրս անելու ժամանակ, Հիւսիսային դէպարտամէնտում անկարգութիւններ տեղի ունեցան. ոստիկանական կոմիսարը, ժանդարմը եւ 12 անձինք վէրքեր ստացան։

ՀՌՕՄ. «Patria» լրագրի ստացած տեղեկութեան համաձայն, Թագաւորը կայցելէ Բերլինը օգոստոսի վերջերին։ Թագաւորը Պրինէտտիի ուղեկցութեամբ հինգ օր կանցկացնէ Գերմանիայում։

Կ. ՊՕԼԻՍ. Զէրնօգօրիական դեսպան Բակիչ բողոք ներկայացրեց Թիւրքիայի առաջարկութեան դէմ՝ Մօկրայա-Պլանինա չրջանը չէզոքացնելու մասին։ Դեսպանը յայտնեց, որ Զէրնօգօրիան պահանջում է սահմանի ճիշդ որոշումն եւ այն ժամանակ միայն հնարաւոր կը լինի կարգադրել միացած հարցերը։

ԺԸՆԷՎ. «Journal de Jenève» լրագրի խօսքով, իտալա-շվէյցարական տարաձայնութիւնը կարգադրված է Բերնի գերմանական դեսպան Բիւլօվի միջոցով։ Երկու երկիրների դեսպանները փոխարինված են հաւատարմատարներով։ Պաշտօնական հաղորդութիւն դեռ եւս չը կայ։

ԲԵՐԼԻՆ. Ի նկատի առնելով լրագրական այն տեղեկութիւնները, թէ պրուսական ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանագրի պատճառով յունիսի 10-ից (23), ռուս-ուսանողուհիները աւելի դժուարութեամբ են ընդունվում պրուսական համալսարաններում, քան ուրիշ ազգի ուսանողուհիները, նոյնպէս եւ տեղական ուսանողուհիները, «Հիւսիսային Գերմանական լրագիրը» հաստատում է, որ բոլոր օտարազգի ուսանողուհիները առանց խտրութեան ընդունվում են մի եւ նոյն պայմաններով, ինչպէս եւ պրուսական հպատակները. մինիստրական հրամանագրութիւնը վերաբերվում էր միայն այն հարցին, թէ ինչպիսի գնահատութիւն պէտք է տալ ռուսական իգական գիմնազիաների աւարտման վկայականներին համեմատելով ուսուցչուհու կոչման համար տրրվող պրուսական վկայականների հետ։

14 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է Մեծ Իշխան Սերգէյ Միխայլօվիչի նախագահութեամբ կայացած յանձնաժողովի առաջին նիստի օրագիրը Թատրոնին եւ տեսարաններին վերաբերեալ օրէնքները վերաքննելու մասին։

ԼՕՆԴՕՆ. Թագաւորը ներկայ էր զբօսնաւի վրա գաղտնի խորհրդի նիստին եւ ստորագրեց երկու հրովարտակ, որով թագադրութիւնը նշանակվում է օգոստոսի 9-ին (յուլիսի 27-ին)։

ԿԻԼ. Կօպէնհագէնից այստեղ ժամանեց Վալդէկ-Րուսսօ։

Կ. ՊՕԼԻՍ. Սանիտարական խորհրդի արտակարգ նիստում վճռված է տասներկու օրվայ կարանտինի ենթարկել Եգիպտոսից ստացվող մթերքները։

ՀԱՄԲՈՒՐԳ. «Hamburger Nachricten» լրագիրը հերքում է տարածված անհիմն լուրերը մորգանեան ծովային տրէստի մասին. տեղի ունեցած ստորագրութիւնն արդէն գերակշռեց դրամագլուխների գումարին մի քանի անգամ։ Գործերը անգլիական ընկերութիւններից ընդունելու ժամանակամիջոց առաջվան պէս համարվում է 1902 թւի դեկտեմբերի 31-ը։

15 յուլիսի

ԿԱԶԱՆ. Յուլիսի 12-ին «Մէչէն» շոգենաւով Կազան ժամանեց Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինօվիչ, գնաց իւնկէրների դպրոցի բարակները եւ ապա ճանապարհ ընկաւ ներքեւ Վօլգայով։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ. Հրատարակված է «սնանկացած «Մասնվիլուէլսբանկի» երկրագործական բանկի հաշիւը։ Պակասորդը—928,288 մարկ է։

ԶԱՐԶՈՑ. Ժամանեց բուխարական էմիրը ուսսաց քաղաքը եւ երեկոյեան շարունակելու է ճանապարհը։

ԽԱՐԲԻՆ. Յունիսի 20-ից մինչեւ յուլիսի 10-ը Խարբինում խօլերայից հիւանդացան 377 ռուսներ եւ 863 չինացիներ. մեռան 187 ռուսներ եւ 639 չինացիներ։ Հիւանդութիւնը թուլանում է։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ. Բերված է մեծ քանակութեամբ ապրանք. կարծվում է, որ գումարումը վաղ կը լինի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ. Պօրտօ-Պրէնսի հիւսիս-ամէրիկեան դեսպանը հաղորդում է, որ ներքին պատերազմը տարածված է ամբողջ երկրում։ Ֆիրմէն արշաւում է Պօրտօ-Պրէնսի վրա։ Ժամանակաւոր կառավարութիւնն արձակված է։

ՊԱՐԻԶ. «Ֆրանսիական հայրենիքի լիգայի» երէկ հրաւիրած ժողովում Կօպպէ եւ Լէմէտր դատապարտում էին համայնքներից քոյր-դաստիարակչուհիներին աքսորելու քաղաքականութիւնը, որ հռետորները անուանում էին ապօրինի։ Տեղի ունեցան նացիօնալիստական ցոյցեր. մի քանի ձերբակալութիւններ եղան։

ՊԱՐԻԶ. Կէս օրին Համաձայնութեան հրապարակի վրա կայացաւ սօցիալիստների եւ միաբանութիւնների պաշտպանների գումարումը. տեղի ունեցան աղմկալի վէճեր, բայց խաղաղ էին պահում իրանց։ Ոստիկանութիւնը բաժանեց վիճողներին. կային մի քանի մանր ընդհարումներ։—Լիլլից եւ Լիօնից հաղորդում են նոյնպէս աննշան ընդհարումների մասին։

ՊԱՐԻԶ. Եղած ընդհարումներից աչքի ընկնողը Avenue Gabriel-ումն էր. այնտեղ, «Թող կործանվի հոգեւորականութիւնը» աղաղակներով, ամբոխը քարերով ռմբակոծեց նկարիչների կլուբի շինութիւնը։ Երեկոյեան տեղի ունեցաւ կռիւ կղերականների եւ սօցիալիստների միջեւ. ամբոխին ցրվեց ոստիկանութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԲԱԼԱԽԱՆԻ. Մ. Յ. Ստացանք հեռագիրը. Մենք գրել ենք Ն. Դաւթեանին։ Տեղեկացէք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ընդունում է հիւանդներ Շուշում, երկու ամսով, յուլիսի 8-ից

Հասցէն՝ Մեղրեցոց եկեղեցու մօտ, Մէլիք-Ղարագեօզեանցի տանը։

1—6 Տ. Յարութիւնեան

ՅՈՎՀԱՆ. ԱՐԱՄԵԱՆՑԻ

հրատարակութեամբ լոյս են տեսել հետեւեալ պատկերազարդ գրքոյկները՝

1) «Բէօրնսօն», կազմ. Ե. Թոփչեանց—10 կ.
2) «Մահմէդ» » » 7 »
3) «Մեսրոպ Մաշտոց», կազմ. Ե. Թ.— 5 »
4) «Սահակ Պարթեւ» » » » 5 »
5) «Հաուպտման» » » » 15 »

—

Շուտով լոյս են տեսնելու՝

1) «Իբսէն», 2) «Գօգօլ», 3) «Զօրօաստր»։

Գիւղատնտեսական գրքյեր՝

1) «Ընտրութիւն կաթնատուների», կազմեց Գ. Մեծատուրեան։

Դիմել՝ 1) С.-Петербургъ. Ив. М. Арамянцу, Ямская, 3. 2) Тифлисъ. С. В. Абрамьяну, Серг. К-ра Арамянца. 3) Баку. Товарищество „Прометеусъ", Красноводская ул., д. Амировыхъ. 5—5

Լ ո յ ս տ ե ս ա ւ

ԼԷՕ

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ

Կենսագրական-պատմական ուսումն.

Չորս պատկերով (Յովսէփ կաթ. Արղութեան, Կայսրուհի Եկատերինա II, իշխան Գ. Պօտեօմկին, կոմս Յովհաննէս Լազարեան)։

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԷԿ

Ծախվում է «Մշակի» Խմբագրատանը։ Հասցէն. Тифлисъ, редакція газ. «Мшакъ».

ԹԱՐԳՄԱՆՎՈՒՄ Է

Պօտապէնկօյի

„ԳԵՆԵՐԱԼԻ ԴՈՒՍՏՐԸ"

7—8 Ս. Վ. Բաբեան

ՀՕՐՈՒՆՑԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի ն անաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է [illegible] Պարսկաստանից [illegible]։ Հասցէն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 30—100

ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА ВЪ ТИФЛИСѢ

„Кавказскій Листокъ Объявленій"

(ИЗДАНІЕ ПРИ „БЮРО ТРУДА")

ПРОГРАММА. Правительственныя распоряженія по вопросамъ труда. Цѣны на раб. руки. Всевозможныя справочныя свѣдѣнія. Телеграмы агентства и частныя объявл. Годовая цѣна (300 номеровъ) съ доставкой въ Тифлисѣ—1 руб. 50 коп., съ пересыл. —2 рубля, заграницу—4 руб. Номеръ—1 коп.

ЦѢНЫ НА ОБЪЯВЛЕНІЯ отъ 2 до 4 коп. за строчку въ 35 буквъ. Траурн. отъ 1 руб. до 2 руб. Объявленія въ справочномъ отдѣлѣ по 10 коп. за каждый разъ, за 10 разъ 75 коп. Скидка трудовому классу 10%. За неоднократныя объявленія скидка отъ 5 до 30% и по соглашенію. Контора редакціи: „Бюро Труда", Эриванская площадь, противъ сквера, караванъсарай Тамамшевыхъ. Редакція временно находится въ томъ же зданіи, въ пассажѣ, верхній этажъ. № 28. О пріемѣ подписки и объявленій и о срокѣ выхода будетъ объявлено особо.

Редакторъ-издатель **Николай Тамамшевъ**

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը ա... տած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մ... Նուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն կ... կասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն ... նաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՑ

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձ ր ի ա պ է ս կուրսեր հիմնողի ... կարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческ... курсовъ С. П. Мануэльянцу. (Ե.) 4—12

Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով հրաւիրում է պ.պ. փայատէրերին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, որ տեղի կունենայ չոր... չաբթի, յուլիսի 31-ին, երեկոյեան 8 ժամին, վարչութեան շինութեան մէջ—Երեւանեան հ... պարակ, տուն Խարազովի։

Զբաղման առարկաները

Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական Ակցիոներական ընկերութեան կանո... դրութեան ծրագրի քննութիւնը, որով վերակազմվում է նա այժմեան ընկերութիւնից, ... մասնաժողովի եզրակացութեան հետ միասին, որին ընտրել է այս տարվայ յունիսի 23-ին ... ղի ունեցած ընդհանուր ժողովը։

Մի եւ նոյն ժամանակ վարչութիւնը յիշեցնում է. 1) որ հաւատարմաթղթերը պէտք ... ներկայացվեն վարչութեան ոչ ուշ, քան ժողով կայանալուց երեք օր առաջ, համաձայն ըն... րութեան պայմանագրի 24 պարագրաֆի. 2) նախնական անզորրագրերի յանձնելը մէկ տիրո... միւսին պէտք է կատարվի համաձայն ընկերակցական պայմանագրի 8-դ պարագրաֆի։

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ ձայների սահմանված թւի չը գալու պատճառ... այն ժամանակ երկրորդ ընդհանուր ժողովը նշանակվում է կիրակի, օգոստոսի 4-ին, առա... տեան 10 ժամին, որը կայացած կը համարվի, որքան էլ ձայն ունեցողներ հաւաքվեն։

Վարչութիւնը խնդրում է պ.պ. բաժնետէրերին՝ չապալել փոխելու ժամանակաւոր անո... րագրերը նախնական բաժնետիրական արժեթղթերով։ 2—3

Ցինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական—առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ա տ ե ս տ ա տ ն ե ր։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) առեւտրական աշխարհագրութիւն։ 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 2—25

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Ե ր կ ո ւ ս ե ռ ի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4 ամսում, պատասխանատուութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղումն ամենավատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թւի Ս ե պ տ ե մ բ ե ր ի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճար ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում է, ֆինանսների նախարարութեան թոյլտրված ծրագրի համաձայն, վկայագիր։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թ ի ֆ լ ի ս ու մ, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (Կ. ե. հ. շ.) 7—35